# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ.— ՀԱՅ ՏՊԱԳՐԻՉԸ՝ ԵՐԿԻՐԷ ԵՐԿԻՐ

## 1512 - 1912

## ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ կրնանք խոստովանիլ թէ տպագրութեան գործին նուիրուած Հայեր — օտարազգի արուեստակիցներու նման — ժամանակի երկար անցողութեան մը միջոցին՝ եղած են լծակից ու գործակից դաստիարակին ու կղերականին : Ազգերու լուսաւորութեան գործին համար Տպարանը մնաց իբրեւ տաճար, դարերէ ի վեր չդադրեցաւ իր պատարագը մատուցանելէ Մամուլ-բագինին վրայ՝ հեղմամբ սեւ մելանին ու բոլորանուէր սպասարկութեամբ Գրաշար-դպիրներու : Իր գոյութեան ու կոչումին մէջ միշտ բարձր եւ ազնիւ՝ Կիւթէմպէրկի գիւտը եղած է տարածիչը լոյսի եւ բարիքի. միտք չբերուեցաւ երբեք զայն նկատել միայն աղբիւր շահերու՝ որոնք կրնային յառաջ գալ անոր կիրառումովը : Անո՛վ պարծեցած է համապազ մտաւորական աշխարհը, վասն զի համուրէն ընդունուած էր այլ եւս թէ մարդկութեան իրական յառաջդիմութիւնը մեծ աղերս ունէր «կապարեայ շարժուն տառ»երուն եւ մեքենային տակ անոնց անխոնջ երթուդարձին հետ :

Սակայն եւ այնպէս, տարիներու ընթացքին, բնոյթը սակաւ փոխուիլ սկսաւ Տպագրութեան արուեստին : Նոր սերունդներ հասան, որոնք հպատակեցունել ուզեցին զայն իրենց շահամոլ նկատումներուն : Տպագրութիւնը որ միայն հասարակաց կրթութեան ու զարգացման հզօր ազդակը կը մնար, դարձաւ առեւտրական զբաղում մը, արդիւնաբեր հայթայթելու միջոց մը, շատ բան առնելով իր ազնուացուցիչ հանգամանքէն : Եւ ահա, դեռ ի լոյս առաջնորդող, դեռ ի բանականութիւն ու մարդասիրութիւն մղող հրատարակութեանց առընթեր՝ փոխն ի փոխ երեւան գալ սկսան խաւարամիտ, կրօնամոլ, ատելութիւն արծարծող ու կիրքեր փայփայող գիրքեր ալ, բաւ էր որ տպագրիչը նպաստաւորուէր անկէ վճարումներով : Առատօրէն ու շատ հրատարակել, ու շատ շահիլ : Աւելի հեռուներէն սկզբունքը դարձաւ Կիւթէմպէրկի Զաւակաց, առանց անդրադառնալու տպածներուն որակին եւ անգիտանալով Մամուլին ունեցած սրբազան դերը :

Յամենայն դէպս, Մամուլը գտնուելով իր նախնի կոչման բարձրութեանը մէջ՝ պատուանդանին վրայ է միշտ՝ վատերու դէմ մղուած պայքարներուն ի սպաս եւ անիրաւեալներու համար տարուած յաղթանակներուն ի նպաստ : — Այս հրաշարուեստ գիւտին ծանօթանալու, անոր գաղտնեաց թափանցելու եւ զայն գործադրութեան դնելով՝ Հայոց լուսաւորութեան համար ծառայած ըլլալու միակ առաջադրութեամբ՝ ունեցած ենք բազմաթիւ Հայեր որոնք տքնած, տառապած, չարչարուած ու ճամբորդած են անպատճառ եւ յաջողած գլուխ հանել սուրբ գործը : Ահա առաջինքն այն դէմքերուն որոնց շատ բան կը պարտի մեր ազգը. — Վենետիկի մէջ ասկէ չորս հարիւր տարի առաջ ապրող **Մէղապարտ Յակոբէն** մինչեւ **Եւդոկիացին Աբգար** որ նժդեհութեան ցուպը ձեռքը՝ միեւնոյն տեղը երկրորդ, ապա Պոլիս՝ առաջին հիմերը դրաւ հայ տպագրութեան, նոյն նպատակաւ Տիարպէքիրէն Տօժերու քաղաքը պանդխտող **Տէրզնցին Յովհաննէս** այրիացեալ քահանան, տպագրութեան արուեստը սորվելու համար Ստամպօլի մէջ հաւուման եղող **Մարզուանցին Գրիգոր**, հայերէն Աստուածաշունչը «տպագիր» ըլլալով առաջին անգամ Հայուն ձեռքը յանձնող **Դլենց Ոսկան** բազմաչարչար վարդապետը, Սպահան՝ վանքի մը անկիւնը՝ թուղթ, տիպ ու տառ ի չգոյէ ի գոյ ածող **Կեսարացին Խաչատուր** եւ իր ժիրաժիր արբանեակ **Ջուղայեցին Յովհաննէս**, պառակտեալ Հայութեան գերագոյն մխիթարութիւն՝ **Մխիթար Աբբայ**, Հայ Մամուլի մը գոյութեան համար իր «երկայն բազուկ»ը մինչեւ Նախիջեւանի տպայեր բարձունքը տարածող **Արղութեանց Արքազան**, իր տպագրիչ-ձուլիչի հռչակով՝ Վրաց վերջին թագաւորէն հրաւիրուող **Ապուչեխ-**